

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

01. 02. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Դ. Մանուչարյանը, Վ. Գևորգյանը, Ա. Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերդյանը, Մ. Սարգսյանը, Ն. Սարգսյանը, Ա. Աղլոյանը, Ա. Սահակյանը, Ս. Գրիգորյանը- մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում`

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց`

1. Մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Վ. Ասատրյանին, Տ. Բաղդոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`
Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման նկատմամբ:
2. Մարզպետի տեղակալ Ա. Դարբինյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ` Ա.Ջանազանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`
Անհրաժեշտ հսկողություն սահմանել Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն ավտոմայրուղու վերանորոգման նպատակով քաղաքաշինական և հողիատկացման նորմերի պահպանման նկատմամբ, որպեսզի բացառվեն ապօրինի շինարարություններն ու հողիատկացումները:
3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`
Անհրաժեշտ հսկողություն իրականացնել մարզի համայնքների, ուսումնական հաստատությունների և առողջապահական կազմակերպությունների կողմից ֆինանսական ծախսերի վերահսկման նկատմամբ, որպեսզի հնարավորինս բացառվեն չհիմնավորված ծախսերը:
4. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և հետևողական աշխատանքներ իրականացնել այն համայնքների նկատմամբ, որտեղ առկա են քաղաքացիների կողմից հողամասերից հրաժարվելու և հետ վերադարձման դեպքեր:

5. Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝ Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել ոլորտային աշխատանքային խմբերի և շահագրգիռ կազմակերպությունների ու կառույցների հետ և սույն թվականի մարտի 1-ից այդ կապակցությամբ կազմակերպել անհրաժեշտ քննարկումներ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/